

ՄԻ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

(Ն. Ադոնցի «Քննություն Մովսես Կաղանկատվացու» աշխատության ամբողջական տեքստի հրատարակության առթիվ¹)

Ամեն ինչ սկսվեց նրանից, որ գրող, բանասեր, քննադատ ու հասարակական գործիչ, Փարիզում լույս տեսնող «Անահիտ» գրական-գեղարվեստական հանդեսի հրատարակիչ Արշակ Չոպանյանը դիմեց Ն. Ադոնցին՝ խնդրելով նրան հայտնել իր կարծիքը Մովսես Կաղանկատվացու և նրա «Պատմություն Աղուանից աշխարհի» աշխատության գրության ժամանակի մասին: Ն. Ադոնցը, սիրահոծար ընդունելով առաջարկությունը, ժամանակի տղության պատճառով մի քանի էջի սահմաններում ներկայացնում է յուր նկատառումները, որոնցում հանդես է գալիս Մխիթարյան միաբանության անդամ Վարդան Հացունու այն տեսակետի դեմ, թե Մ. Կաղանկատվացին VII դ. հեղինակ է, և առաջ քաշում նրա՝ X դ. առաջին կեսի պատմիչ լինելու սեփական վարկածը²: Սրան հետևում է հայր Վ. Հացունու պատասխան հոդվածը՝ «Մ. Կաղանկատվացին կապրեր է դարուն» առարկություն չվերցնող վերնագրով, որտեղ պատվարժան հայրը պաշտպանում էր խնդրի առնչությամբ նախկինում արտահայտած հայեցակետը³: Հարցը, սակայն, երկու հեղինակների համար էլ Մ. Կաղանկատվացին չէր, այլ Մ. Խորենացին: Քննության առնելով ու որոշելով առաջինի ապրած ժամանակաշրջանը՝ նրանք լուծում էին Մ. Խորենացու դարաշրջանի հարցը, քանի որ, ինչպես նկատվել էր հայագիտության մեջ, Մ. Կաղանկատվացին ակնհայտորեն օգտվել է Պատմահորից, և նրա ապրած ժամանակաշրջանը VII դարով վճռելը Մ. Խորենացուն կտաներ V դար: Ըստ էության, նրանց բանավեճը այն թեժ քննարկումների շարունակությունն էր, որ XIX դ. կեսերից ծագել էր հայ և օտարագրի հայագետների միջև Պատմահոր ապրած ժամանակաշրջանի շուրջ և նոր ուժգնությամբ վերսկսվել XX դ. 30-40-ական թթ.՝ նրան V դ. հասցնելով մինչև X դ. և կրկին վերադարձնելով իր արժանի տեղը: Եվ Ն. Ադոնցը, որ Մ. Խորենացուն համարում⁴ էր ոչ V դ. պատմիչ, ձեռնարկում է Մ. Կաղանկատվացուն նվիրված՝ Վ. Հացունուն հակընդդեմ ներկա աշխատությունը,

¹ **Ադոնց Ն.**, Քննություն Մովսես Կաղանկատվացու: Աշխատասիրել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պետրոս Հ. Հովհաննիսյանը, խմբագրությամբ Հակոբ Քյոսեյանի, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, 2005, 176 էջ:

² **Ադոնց Ն.**, Խորենացիական հարցն ու հայր Վարդան Հացունի (Անահիտ, 1938, N 3, էջ 85-87) (տե՛ս նաև գրախոսվող աշխատությունը, էջ 159-163 (Հավելված 2):

³ **Հացունի հ. Վարդան**, Մ. Կաղանկատվացին կապրեր է դարուն (Բազմավեպ, N 10-12, 1938, էջ 268-277):

⁴ Մ. Խորենացու ժամանակաշրջանի հարցում հայագետները բաժանվել էին երկու խմբի, որոնցից յուրաքանչյուրում կային թե՛ հայ և թե՛ օտարագրի ականավոր ու ճանաչված բանասերներ և պատմաբաններ: Նրանք համար ու անգիջում բանավեճեր էին մղում՝ հոգուտ իրենց տեսակետի նորանոր փաստարկներ բերելով (մանրամասն տե՛ս Մալխասյանց Ստ., Խորենացու առեղծվածի շուրջը, Բանասիրական հետազոտություններ, Ե., 1982, էջ 135-287: Նաև՝ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ., ներածությունը և ծանոթ. ակադեմիկոս Ստ. Մալխասյանի, Ե., 1990, էջ VII-LXIX): Արդի հայագիտությունը աներկբայորեն գտնում է, որ Մ. Խորենացին V դ. հեղինակ է: Հարցի վերջնական ու սպառիչ լուծումը տվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Խ. Սարգսյանը (տե՛ս նրա «Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Ե., 1991):

որտեղ վերաբարձում է Ա. Չոպանյանին ուղղված նամակում առաջ քաշած դրույթները և փորձում դրանք հիմնավորել Մ. Կաղանկատվացու գրքից քաղված ընդարձակ մեջբերումներով ու պատմաբանասիրական վերլուծություններով:

Ահա այս կերպ Մ. Խորենացու շուրջ ծավալված բանավեճը կողմերին բերեց դեպի Մ. Կաղանկատվացին, որը, ի դեպ, մինչ այդ էլ էր գտնվում ուսումնասիրողների ուշադրության ոլորտում: Մ. Խորենացու նման նրա այս անվանակիցն էլ՝ Կաղանկատուք գյուղից, ճանաչում ստանալու առաջին իսկ օրերից դարձել էր բուռն քննարկումների թեմա⁵: Ուսումնասիրողներին հետաքրքրում էին ինչպես նրա ապրած դարաշրջանի, այնպես էլ նրա անունով մեզ հասած ու երեք գրքերից բաղկացած «Պատմութիւն Աղուանից աշխարհի» վերնագիրը կրող աշխատության հեղինակի կամ հեղինակների, գրության ժամանակի, նյութի, կառուցվածքի, լեզվի, ոճի ու այլ կարգի հարցեր⁶: Ն. Աղոնցի սույն ուսումնասիրությունը նմանատիպ հետազոտություններից մեկն էր և միտված լինելով լուծելու Քերթոզահոր առեղծվածը՝ նպատակաուղղված էր Մ. Կաղանկատվացու ժամանակաշրջանի որոշմանը և կոչված էր նաև մեկընդմիջտ վերջ դնելու Մ. Կաղանկատվացու շուրջ ծավալված երկարամյա բանավեճին: Հետևաբար, ծնունդ առավ այսօր մեր առջև դրված մի մեծարժեք գործ, որը ոչ միայն հեղինակի քննադատական մտքի փայլուն արգասիքն է, այլև նրա խոշոր ներդրումը հայագիտության մեջ ընդհանրապես և մասնավորապես այն ժամանակներում դեռևս երիտասարդ գիտության՝ աղվանագիտության մեջ:

Աշխատությանը, սակայն, վիճակված չէր միանգամից և ողջ ծավալով ներկայանալու գիտական հասարակայնությանն ու իր ընթերցողին: Այն, որ 1939 թ. մաս-մաս հրատարակվում էր «Անահիտ» հանդեսում⁷, Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին Գերմանիայի կողմից Ֆրանսիայի գրավումից հետո ամսագրի ժամանակավորապես փակվելու պատճառով դադարում է տպագրվելուց՝ թողնելով անավարտ աշխատանքի տպավորություն: «Աղվանից աշխարհի պատմությամբ» ու նրա հեղինակով զբաղվող հետագա ուսումնասիրողներին մնում էր հաշտվել այն տխուր մտքի հետ, թե ուսումնասիրությունը շարունակություն չի էլ ունեցել: Մինչդեռ, ինչպես

⁵ Մ. Կաղանկատվացին ու իր երկասիրությունը ճանաչ դարձավ XIX դ. 20-ական թթ., բայց հատկապես այն ժամանակներից, երբ ֆրանսիացի հայագետ Ե. Բորեն, Էջմիածնում ծանոթանալով «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գրքի ձեռագրերից մեկին և վերադառնալով Փարիզ, նրանից առանձին հատվածներ թարգմանեց ֆրանսերեն և գիտական շրջանառության մեջ դրեց (տե՛ս **Սվազյան Հ. Ս.**, Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» աղբյուրները), (Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1972, N 3, էջ 195): Այնուհետև աշխատությունն ու նրա հեղինակը իրենց վրա բևեռեցին հայ, եվրոպացի, ռուս ու այլազգի հետազոտողների ուշադրությունը, որը աննվազ թափով շարունակվում է նաև մեր օրերում (մատենագիտությունը տե՛ս Բաբայան Լ. Հ., Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (IX-XII դարեր), Ե., 1981, էջ 359-362 (կազմող՝ Մարաբյան Ս.), նաև, Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, 1983, էջ ԽԵ-ԽԶ (այսուհետև՝ Կաղանկատվացի):

⁶ Հանգամանքներն տե՛ս Կաղանկատվացի, էջ ԽԴ: Նաև՝ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Ե., 1969, էջ III-XVI. **Мовсэс Каланкатуаци, История страны Алуанк, пер. с древнеармянского, предисловие и комментарии, III. В. Смбатяна, Е., 1984, с. 5-22 (далее – Каланкатуаци);** Մնացականյան Ա.Շ., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Ե., 1966, Սվազյան Հ. Ս., Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» աղբյուրները, էջ 195, ծանոթ. 2-3: Նույնի «Աղվանից աշխարհի» հասկացությունն ըստ Մովսես Կաղանկատվացու (Բանբեր Հայաստանի արխիվների, 1973, N 1, էջ 225-234):

⁷ **Աղոնց Ն.**, Քննություն Մովսես Կաղանկատվացու, էջ 7, ծանոթ. 3:

պարզվում է, նրա անխոնջ հեղինակն առանց ընդհատումների շարունակել է գրել և լրացրել գործը նորանոր բաժիններով, որոնք, սակայն, վերը նշված պատճառով, տպագրության չէին արժանացել: Ճակատագրի բերումով գրքի շուրջ մեկ երրորդը կազմող հիշյալ մասերը հանգրվան էին գտել Բեյրութի և Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանների պահոցներում ու սպասում էին այն պրպտուն հետազոտողին, որը դրանք լույս աշխարհի պիտի հաներ: Եվ գտնվեց նա՝ ի դեմս ԵՊՀ Հայ ժողովրդի պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Պետրոս Հովհաննիսյանի: Նրա ջանքերով ու հետևողականությամբ հայտնաբերվեցին⁸ Ն. Ադոնցի գրական, պատմագիտական ժառանգության այս մասունքները, ի մի բերվեցին, հաղթահարվեցին ձեռագրի ընթերցման ու տպագրության նախապատրաստման աշխատանքների հետ կապված դժվարությունները, և «Անահիտ»-ում տպագրված մասերի հետ լույս ընծայվեցին մեկ գրքով: Այժմ արդեն գիտական հասարակայնությունն ու ընթերցող լայն շրջանակներն իրենց տրամադրության տակ ունեն մեծ հայագետի պատկանելի ուսումնասիրության ամբողջական ու ամփոփ տեքստը: Փաստորեն, գիրքն ապրեց իր վերածնունդը, որը, անշուշտ, նաև հեղինակի՝ սեփական գործի մեկտեղված հրատարակությունը տեսնելու երազանքի իրականացումն էր: Հրապարակ ելավ 65-ամյա վաղեմություն ունեցող մի գիտական հետազոտություն, որի հեղինակը դեռ անցյալ դարի 30-40-ական թվականներին լուծում է տվել հարցերի, որոնց մի մասը միայն այսօր է դրվում քննության:

Նշենք, որ, այնուամենայնիվ, ժամանակներն իրենցն արել են, և արծարծված խնդիրների մի մասը երևում է մեզ հնացած, մինչև վերջ լուծում չստացած և նույնիսկ մերժելի: Այսուհանդերձ, աշխատությունն իր շոշափած շատ ու շատ հարցերով հիմնականում չի կորցրել թարմությունն ու արդիականությունը և մեծ կարևորություն է ներկայացնում գիտության այս ճյուղի համար:

Ն. Ադոնցի գրախոսվող աշխատությունն աչքի է ընկնում գիտական խորությամբ, հարցերի լայնաշերտ քննությամբ ու պատկերավոր լեզվով, որոնք հեղինակի բազմիմացության, հաստատուն գիտելիքների ու ճկուն մտքի տեր լինելու վկայություններն են: Խնդրահարույց հարցերին գիտնականը, որպես հմուտ տեսաբան, մոտենում է պատմահամեմատական քննության դիրքերից: Նրա համոզմամբ, քննական հետազոտություններ կատարելու կարևոր պայմաններից մեկը վերլուծվող իրադարձությունների ստուգումն է իրենց պատմականության մեջ: «Նման դեպքերում լավագույն միջոցն է պատմական ստուգումը, այսինքն, թե որքան ճշմարիտ է քննելի պատմությունը», - գրում է նա⁹ և իր որդեգրած սկզբունքը կիրառում գործնականում: Մ. Կաղանկատվացու՝ վերլուծման ենթակա յուրաքանչյուր հաղորդում քննարկելիս նա վեր է հանում, ընդ որում, մեծ քաջատեղակություն ցուցաբերելով, Հայաստանում ու նրան հարևան երկրներում՝ Պարսկաստանում, Բյուզանդիայում ու Արաբական խալիֆայությունում տիրող այն քաղաքական կացությունը, որի առկայությամբ միայն հնարավոր կլինեին կարագրվող իրադարձությունների ծավալումը: Դրանց հիմամբ հաստատում կամ ժխտում է այս կամ այն հաղորդման իսկությունը, ճշգրտումներ մտցնում, կատարում ժամանակագրական ուղղումներ, շտկում է նաև բնագրային սխալները, սրբագրում «Պատմության» տպագիր օրինակում սպրդած վրիպակները:

Ն. Ադոնցը Մ. Կաղանկատվացուն համարում է X դ. հեղինակ, մեկը նրանցից, որոնք հայտնի են որպես տոհմական պատմիչներ: «Մովսես Կաղանկատվացին, - գրում

⁸ Ն. Ադոնցի արխիվի հայտնաբերման մասին մանրամասն տե՛ս Պ. Հովհաննիսյանի հաղորդումը (Քննություն Մովսես Կաղանկատվացու, էջ 9-11):

⁹ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 28:

է նա, - կազմել է իր Պատմությունը գրեթե այն ժամանակ, ինչ Հովհաննես կաթողիկոս և Թովմա Արծրունի, Ժ-րդ դարի առաջին կեսին, այսպես ասած՝ հատվածական կամ տեղական հայրենասիրության շրջանին: Հովհաննես կաթողիկոս գրել է Բագրատունիների պատմությունը, Թովմա Արծրունիների, Կաղանկատվացին նրանց հետևելով՝ Աղվանից կամ Արցախի իշխանների¹⁰: Նա մատնանշում է պատմիչի շնորհակալ աշխատանքը, որ հավաքել ու մեկտեղ է ժողովել իր երկրամասին վերաբերող ցաք ու ցրիվ նյութերը, տարբեր ժամանակների ու գրիչների գործեր, զանազան թղթեր ու գրվածքներ, պաշտոնական գրագրություններ: Այս ամենը նշելով հանդերձ՝ նա, սակայն, գտնում է, որ վերջիններիս մի մասը անվավեր գրվածքներ են՝ ստեղծված հեղինակի կողմից՝ հների մոտ ընդունված ճառեր ու թղթեր հորինելու և դրանք գործող անձերի վերագրելու սովորության համաձայն¹¹:

Անդրադառնալով Կաղանկատվացի ստեղծագործողին՝ մեծ մտածողը նրան բնութագրում է որպես «մի միջակ հավաքող, որ ընդօրինակել է ձեռքն ընկած նյութերն առանց քննության և քննելու ընդունակության»¹²: Գրքի կազմողը, լրացնում է միտքը քննադատը, մի ուրիշ տեղում «հետամուտ անգամ չի եղել մի ոճի վերածել, ինչպես Մովսես Խորենացին է արել, այլ հավատարմությամբ ընդօրինակել է ինչպես կա, հապավումներով և անտեսելով հաճախ նույնիսկ ժամանակագրական կարգը»¹³: Նման մտայնությամբ էլ նա «Աղվանից աշխարհի պատմությունը» համարել է «կոմպիլյատիվ» բնույթի գործ¹⁴:

Ն. Ադոնցի համար պարզից էլ պարզ է, որ Մ. Կաղանկատվացին գրել է Արցախի պատմությունը: Ճիշտ է, աշխատության մեջ նա ամենուրեք օգտագործում է «Աղվանք» տեղանունը՝ որպես գրքում ծավալվող իրադարձությունների աշխարհագրական տեղի, բայց որ դրանք արտացոլում են Արցախի անցյալը, նա պարզաբանում է Ա. Չոպանյանին ուղղված նամակում, գրելով, որ Մ. Կաղանկատվացու երկը «ամփոփում է Աղվանքի (*իրապես Արցախի*) անցյալը՝ սկզբեն մինչև 950 թվականները»¹⁵: Որ Մ. Կաղանկատվացին գրել է «Արցախի իշխանների» պատմությունը, նա շեշտել է նաև նույն նամակի, արդեն մեր վկայակոչած այն հատվածում, որտեղ խոսում է պատմիչի ապրած ժամանակաշրջանի մասին¹⁶: Այլ խոսքով, Ն. Ադոնցը դեռ իր ժամանակ պարզորոշ ցույց է տվել, որ Մ. Կաղանկատվացու գիրքը Արցախի և (Ուտիքի - Հ. Ս.) նույնն է թե Հայոց Արևելից կողմանց պատմությունն է, փաստորեն, նշել է Աղվանք-Արցախ տեղանունների հոմանիշ գործածումը մեր պատմիչի կողմից և լուծում տվել մի խնդրի, որ մինչև օրս էլ մնում է որպես ադրբեջանցի հեղինակների շահարկումների առարկա:

Մ. Կաղանկատվացու տվյալների հիման վրա Ն. Ադոնցը ցույց է տալիս, որ հայ ժողովրդի համար վճռական և բախտորոշ պահերին նրա տարբեր հատվածները, այդ

¹⁰ Նույն տեղում, էջ 162: Ն. Ադոնցից բացի, Մ. Կաղանկատվացուն X դ. պատմիչ են կարծել նաև Բրոսսեն Մ., Ք. Պատկանյանը, Հ. Մանանդյանը, Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Ն. Ակինյանը, Ա. Հակոբյանը և ուրիշներ (թվարկումը տե՛ս նաև **Ադոնց Ն.**, Քննություն Մովսես Կաղանկատվացու, էջ 164, ծանոթ. 1):

¹¹ **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 55:

¹² Նույն տեղում, էջ 45:

¹³ Նույն տեղում, էջ 163:

¹⁴ Կաղանկատվացու աշխատությանը նման գնահատական նա տվել է իր նախորդ աշխատություններից մեկում: Տե՛ս *Армения в эпоху Юстиниана*, Е., 1971, էջ 291:

¹⁵ **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 159 (ընդգծ. Հ. Ս.):

¹⁶ Նույն տեղում, ծանոթ. 10:

թվում՝ Արցախը, ընդհանուր թշնամու դեմ հանդես են գալիս միասնական կամքով ու համատեղ, որ ընդգծում է վերջինիս սերտ կապը մայր հայրենիքի հետ:

Ուսումնասիրողները Մ. Կաղանկատվացուն անդրադառնալիս սովորաբար իրենց հետաքրքրող հարցերի շրջանակում առաջ են քաշել նրա աղբյուրների հարցը՝ ձգտելով պարզել, թե նա ինչ աղբյուրներից և ինչպես է օգտվել իր «Պատմությունը» շարադրելիս: Ն. Ադունցը, նույնը անելով հանդերձ, բարձրացնում է նաև հետագա պատմիչների համար գրքի աղբյուր ծառայելու հանգամանքը և բացահայտում, որ այն, որպես սկզբնաղբյուր, օգտագործել են Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին և ուրիշներ, իսկ Ստեփանոս Սյունեցու մասին պատմածները, լրացվելով վերջինիս գրական գործերի հիշատակումով, մտել են վկայաբանական ժողովածուի՝ «Յայսմաւորքի» բոլոր չորս խմբագրությունների մեջ¹⁷:

«Պատմական ստուգումը» համարելով սխալ ու տարօրինակ կարծիքների հերքման «անվրեպ միջոց»¹⁸ ականավոր պատմաբանն այդպես էլ սկսում է հետազոտությունը, նպատակ հետապնդելով, ինչպես ինքն է գրում, ցրել Մ. Կաղանկատվացու շուրջ առաջացած մոլորությունը և ներկայացնել «Աղվանից հեղինակին պատմական ու գրական լույսի մեջ»¹⁹ խնդրի իրականացման համար հետազոտության նյութ դարձնելով «Աղվանից աշխարհի պատմության» երկրորդ և երրորդ գրքերը: Դա պայմանավորված էր նրանով, որ ուսումնասիրողների տարակարծությունները խնդրո առարկա հարցի շուրջ հենց դրանցում առկա հաղորդումների տարբեր մեկնաբանությունների հետևանք են: Այս գրքերի բանասիրական քննությունն է, որ ուսումնասիրողներին բաժանել է երկու խմբի. մի խումբը, գտնելով, որ Մ. Կաղանկատվացին գրել է միայն առաջին երկու գրքերը, նրան համարում է VII դ. պատմիչ, իսկ մյուսը, նրան վերագրելով բոլոր երեք գրքերի հեղինակը լինելու պատիվը, դասում X դ. պատմիչների շարքին²⁰: Թե՛ բանասերները և թե՛ պատմաբանները նշված գրքերից բերված օրինակներով ու դրանցից քաղված տողերով, բառակապակցություններով ու նույնիսկ առանձին բառերով են հիմնավորում իրենց տեսակետները, որոշում պատմվող իրադարձությունների ժամանակաշրջանը, հեղինակի՝ դրանց ժամանակակից լինել-չլինելը և ըստ այդմ էլ ամբողջ աշխատության գրության ժամանակն ու համապատասխանաբար՝ հեղինակին կամ հեղինակներին²¹:

Հայր Վ. Հացունին, որը, ինչպես գիտենք, պատկանում է ուսումնասիրողների առաջին խմբին, ավելի է կրճատում Մ. Կաղանկատվացու բաժինը: Նրա համոզմամբ վերջինս գրել է առաջին (Ա) գիրքը և երկրորդ (Բ) գրքի 52 գլուխներից միայն 28-ը (Ա-ԻԸ)՝ մնացած 24 (ԻԹ-ԼԲ) գլուխների համար ենթադրելով մի ուրիշ գրիչ: Միաբանի կարծիքով, իր կողմից Մ. Կաղանկատվացուն վերագրած այդ մասն էլ նա միանգամից չի գրել, այլ նախ մինչև Բ գրքի ԺԳ գլուխը՝ 628 թվականին, ապա շուրջ 40 տարի անց

¹⁷ Նույն տեղում, էջ 132-134:

¹⁸ Նույն տեղում, էջ 43:

¹⁹ Նույն տեղում, էջ 14:

²⁰ Վերջիններիս ոչ լրիվ ցանկը մենք տեսանք վերևում (ծանոթ. 10), իսկ ահա առաջինների թվում են Ս. Սումայանը, Ֆ. Նոյմանը, Գ. Զարպիանայանը, Մ. Բարխուտարյանը, Աս. Մնացականյանը, Վ. Առաքելյանը և ուրիշներ (Տե՛ս **Ադունց Ն.**, Քննություն Մովսես Կաղանկատվացու, էջ 164, ծանոթ. 7):

²¹ Առաջին գիրքը վիճարկման չի ենթարկվում: Բոլոր ուսումնասիրողներն անխտիր, այդ թվում և ողջ աշխատության համար մեկ հեղինակ ճանաչող ուսումնասիրողներն էլ ընդունում են, որ այն հաջորդ գրքերի հետ գրված են միևնույն հեղինակի կողմից, և այդ հեղինակը Մ. Կաղանկատվացին է:

երկրում տիրող ծանր կացության ազդեցության ներքո շարունակել է պատմությունը ԺԴ գլխից և ավարտել 670 թվականին ԻԸ գլխով՝ միաժամանակ Մ. Կաղանկատվացուն համարելով նկարագրվող իրադարձությունների ժամանակակիցն ու ականատեսը²²: Ն. Ադոնցը չի համաձայնվում նման մտքի հետ և հենց ԺԳ գլխից բերված մի պարզ օրինակով, որը թերևս չի նկատել հայր Հացունին, առաջին հարվածն է հասցնում «628 թվի ճակատին»: Ուղղակի վկայակոչելով հիշյալ՝ ԺԳ գլխի վերջին տողերը²³, որտեղ խոսվում է Սասանյանների վերացման և արաբական տիրապետության հաստատման մասին²⁴, պատմական մի իրադարձություն, որ տեղի է ունեցել 652 թվին, Ն. Ադոնցը իրավացիորեն եզրակացնում է. «Այս տողերը կարող են գրված լինել 652 թվից հետո, երբ կործանվեց Սասանյան պետությունը և երկրին տիրացան արաբները»²⁵: Այս ծանրակշիռ փաստը միանգամայն բավարար է, որ 628 թվականը որպես Ա գրքի ու Բ գրքի մինչև ԺԴ գլխի գրության թվական, հիմնավորապես դուրս մղվի և ժխտվի դրանցում նկարագրվող իրադարձություններին Մ. Կաղանկատվացու ժամանակակից լինելու հանգամանքը:

Առաջ տանելով միտքը՝ «Քննության» հեղինակը դարձյալ պատմական զուգահեռների միջոցով ու տեքստաբանական-լեզվական վերլուծություններով առանց դժվարության հերքում է Վ. Հացունու նաև այն կարծիքը, թե Աղվանից կաթողիկոս Վիրոյի մասին պատմող գլուխները (Թ-ԺԶ)²⁶ ևս գրված են 628 թվին: Նշված գլուխներում նա այնպիսի հակասություններ, շփոթություններ ու ժամանակավրեպ պատմություններ է մատնանշում, որպիսիք թույլատրելի չէին դեպքերին ականատես ու ժամանակակից և ոչ մի գրողի²⁷: Այս խնդրի հետ և դրանով պայմանավորված՝ ընդդիմախոսը անում է նաև մի շարք ուշագրավ դիտարկումներ իր իսկ անվանակոչած «Վիրոյի դրվագի» պատմական ու իրական բնույթի շուրջ: Նրա բնորոշմամբ Վիրոյի դրվագի «հիմը միանգամայն պատմական է»²⁸: Մ. Կաղանկատվացին սույն դրվագը շարադրելիս ունեցել է վստահելի աղբյուրներ, որոնցից «բուն աղբյուրը, հավանորեն, Վիրո կաթողիկոսի հիշատակարանն է»²⁹: Պատմիչը օգտվել է դրանից, բայց ոչ թե պատճենահանելով, այլ ստեղծագործաբար՝ իր կողմից հավելումներ անելով, որի պատճառով էլ վերջինս ստացվել է ավելի ընդարձակ, քան ընդհանրապես լինում են հիշատակարանները: «Մեր առաջ- պարզաբանում է Ն. Ադոնցը,- Վիրոյի բնագիրը չէ, այլ մի շարադրություն՝ հիմնված Վիրոյի տեղեկությունների վրա»³⁰: Դրվագում ընդգրկված գլուխներից, ըստ

²² Հացունի Վ. հ., նշվ. աշխ., էջ 274-275:

²³ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 24:

²⁴ «Քանզի բառնալոց էր թագաւորութիւնն ի տանէ Սասանականացն և տալ ի ձեռս որդոյն Իսմայէլի» (Կաղանկատվացի, էջ 149):

²⁵ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 24:

²⁶ Սրանք հետագայում դարձել են առանձին ուսումնասիրության նյութ «Կաթողիկոս Վիրոյի պատմությունը» վերնագրով (տե՛ս **Акопян А. А.,** *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Е., 1987, с. 188-196*):

²⁷ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 28-43:

²⁸ Նույն տեղում, էջ 38, Մոտավորապես նույն միտքը հայազետը արտահայտել է նաև «*Армения в эпоху Юстиниана*» աշխատության մեջ խազարաց խաքանին Վիրոյի այցելության մասին պատմող էջերը համարելով «Պատմության» միջուկն ու հնագույն տարրերը» (տե՛ս **Ադոնց Ն.,** նշվ. աշխ., էջ 292):

²⁹ Նույն տեղում, էջ 38:

³⁰ Նույն տեղում, էջ 39:

նրա, միայն ԺԵ գլուխն է կրում «Վիրոյի ինքնաձեռն ստորագրությունը, ուր նկարագրում է սովը և սոսկալի ժանտախտը»³¹։ Սա մի պարզաբանում է, որ վերաբերում է բոլոր նրանց, ովքեր գտնում են, որ Վիրոյի դրվագը նրա ինքնաձեռն գրությունն է, և Մ. Կաղանկատվացին վերցրել ու առանց որևէ փոփոխության դրել է գրքի մեջ։ Մինչդեռ, ինչպես ցույց է տալիս Ն. Ադոնցի քննությունը, «Աղվանից աշխարհի պատմության» հեղինակը իր աղբյուրների նկատմամբ ունեցել է որոշակի վերաբերմունք, որ թույլ չի տալիս նրան մեղադրել միջակության մեջ կամ համարել «միամիտ մեկը»³²։

Շարունակելով Մ. Կաղանկատվացու քննությունը՝ անվանի հետազոտողն անցնում է Ջուանշիրին՝ Աղվանքի (իսմ՝ Հայ Աղվանքի, Հայոց Արևելից կողմանց) ամենավաղ ներկայացուցչին նվիրված գլուխների՝ ԺԵ-ԼԵ (17-35), վերլուծությանը։ Հատվածը, որ հայր Հացունու դասակարգմամբ կազմում է Մ. Կաղանկատվացու գրչին պատկանող գործի «երկրորդ բաժինը»³³, կարևորվում է նրանով, որ, ըստ նրա, հենց այս իշխանի հռչակն է ոգևորել պատմիչին և դրդել շարունակելու գրելը ընդհատված մասից՝ այն հասցնելով մինչև իր հերոսի օրերը, և ավարտել 670 թ.³⁴։ Բայց կարծել, թե նման մոլուկով առաջնորդվող պատմիչը դադարեցրել է գրելը, երբ Ջուանշիրը դեռ կենդանի էր և գտնվում էր փառքի գագաթնակետին, առնվազն միամտություն է։ Եվ հենց այս «ավելի քան տարօրինակ» մտքի դեմ է ծառանում Ն. Ադոնցը. «Զարմանալի է, որ «ոգևորված» պատմագիրը վայր է դրել գրիչը, երբ դեռ հերոսը կենդանի էր»³⁵, և անդրադառնում է փառաբանված իշխանի կյանքին ու գործունեությանը՝ նրա իշխանության գալուց սկսած մինչև եղերական մահը, հրնթացս վերհանելով այդ ողջ պատմության մեջ տեղ գտած սխալներն ու անճշտությունները, գտելով պատմականը վիպականից, քաղաքական կացությանը համապատասխան՝ ճշտելով տեղի ունեցող իրադարձությունների տարբերվելը, վերականգնելով գործող անձերի ու աշխարհագրական վայրերի ճիշտ անունները։ Նա մատնանշում է նաև վրիպումներ, որոնք թույլ չէր տա ժամանակակից պատմիչը, և բերում փաստեր, որոնք ապացուցում են, որ Մ. Կաղանկատվացին շարունակել է իր «Պատմությունը» նաև 670 թ. հետո։

Հենվելով Մ. Կաղանկատվացու տվյալների վրա՝ Ն. Ադոնցը կազմում է Ջուանշիր իշխանի տոհմաձառը՝ նրա նախահայր Միհրանից մինչև մեր հերոսը։ Վերջինիս համար ծննդյան տարի որոշելով 615 թ. և նշելով, որ 590 թվականից Միհրանի՝ Ուտիքի Գարդման գավառում հայտնվելուց մինչև Ջուանշիրի ծննդյան տարին՝ 615 թ. ընկած շուրջ 25 տարվա միջոցին, տոհմագիրը ներկայացնում է յոթ սերունդ, գտնում է, որ այդ ժամանակամիջոցը խիստ նեղ է այդքանին տեղավորելու համար³⁶։ Այնուհետև, մատնացույց անելով Միհրանյանների տոհմական ցանկում չորրորդ հորիզոնականը զբաղեցնող Քաջ Վարդան անունով մի իշխանի և նրան նույնացնելով՝ 488 թ. Աղվենում գումարված ժողովի³⁷ մասնակիցների թվում հիշատակվող՝ նույնպես Գարդմանի տեր

³¹ Նույն տեղում, էջ 37։

³² **Աճառյան Հ.**, Մովսես Կաղանկատվացի։ Քննություն անոր գրության ժամանակի վրա (Բազմավեպ, 1897, էջ 373)։

³³ **Հացունի Վ.**, նշվ. աշխ., էջ 273։

³⁴ Նույն տեղում, էջ 274։

³⁵ **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 43։

³⁶ Նույն տեղում, էջ 44։

³⁷ Աղվենի ժողովի գումարման տարեթվի արձարձած խնդիրների և դրանց շուրջ պատմագիտության մեջ ծավալված թեժ բանավեճերի ու իրարամերժ կարծիքների մասին տե՛ս **Ուլուբաբյան Բ.**, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Ե., 1981, էջ 165-194։

Քաջ Վարդան անունը կրող իշխանի հետ³⁸ ընդգծում է այն աներևակայելի ժամանակագրական անհամապատասխանությունը, որ առկա է Ջուանշիրի նախնիների մասին հաղորդման մեջ և եզրակացնում. «Պատմագիրը ժամանակակից չէ (պատմվող իրադարձություններին - Շ. Ս.) և չի գրել իր գործը ոչ 628 և ոչ 670 տարին: Միայն դարերով հեռու կանգնած գրչին կարելի է մի այսպիսի անգիտակից վերաբերմունք դեպի անցյալը»³⁹:

Ն. Ադոնցը, սակայն, չի սահմանափակվում այսքանով: Նա դեռ ասելիք ունի և նորանոր փաստեր ներկայացնելով՝ ի հակադրություն Վ. Հացունու, հստակորեն ցույց է տալիս, որ Մ. Կադանկատվացին 670 թվականից հետո էլ գրիչը վայր չի դրել: Դրա ամենացայտուն վկայությունը Ջուանշիր իշխանի սպանության (683 թ.)⁴⁰ առիթով գրված «Ողբն» է⁴¹, որը հորինվել է, ըստ Ն. Ադոնցի, 685 թ.⁴²: Բաղդատելով մեծ իշխանի մահը նկարագրող Բ գրքի ԼԴ գլուխը Դավթակ Քերթոդի հիասքանչ ստեղծագործության համապատասխան քառյակների հետ և դրանցում մահապարտի անձի, սպանության ձևի ու ոճի միջև շատ նմանություններ տեսնելով՝ Ն. Ադոնցը անվերապահորեն գտնում է, որ հիշյալ գլխի շարադրանքի համար Մ. Կադանկատվացին լայնորեն օգտվել է հենց «Ողբից»: Իսկ եթե նրա աղբյուրը ստեղծվել է 685 թ., ապա կասկած չի կարող լինել, որ քննարկվող գլուխը գրվել է նշված թվականից հետո, և «սխալ է, ուրեմն, թե պատմագրի գրիչը կանգ է առած ԻԸ գլխի վերջ և թե հետևյալ գլուխները պատկանում են ուրիշ գրչի»⁴³:

Ն. Ադոնցը Մ. Կադանկատվացու հեղինակային գործ է դիտում նաև Ջուանշիրի հաջորդ Վարազ-Տրդատին ու նրա ժամանակաշրջանին վերաբերող ԼԶ-ԽԶ և Բ գրքի մնացյալ բոլոր՝ ԽԵ-ՕԲ գլուխները կամ Բ գիրքն ամբողջությամբ: Իրեն հատուկ բծախնդրությամբ ու լավատեղյակությամբ նա խորամուխ է լինում դրանց վերլուծման մեջ և անվերապահորեն գտնում, որ քննության ենթարկված բոլոր գլուխներում նկարագրվող իրադարձությունների պատկերման «ոճը և հոգին նույնն է, ինչ որ Ջուանշերի պատմության մեջ»⁴⁴, այսինքն՝ գրողը միննույն անձն է՝ Մ. Կադանկատվացին:

Վարազ-Տրդատի ժամանակաշրջանը վերլուծելիս ճանաչված պատմաբանը բացահայտում է այն ամուր կապը, որ գոյություն ունեն նորընծա իշխանի և Կենտրոնական Հայաստանի միջև: Մայր երկրի հետ սերտ հարաբերություններ կային նաև նրա նախորդների օրոք, և այժմ դրանց պահպանումով Հայոց Աղվանքի առաջին իշխանը շարունակում էր նրանց արտաքին քաղաքական գիծը: Նա բարեկամական հարաբերություններ էր պահպանում Բյուզանդիայի հետ, վայելում էր կայսր Հուստինիանոս Բ-ի (685-695, 705-711) հովանավորությունը և նրա հետ էլ կիսում ճակատագրի հարվածները: 695 թ. կայսեր գահընկեց լինելուց հետո Աղվանից այս իշխանն էլ է կորցնում գահը: 699 թ. նա նոր կայսր Տիբերիոս Գ Ապսիմարոսի կանչով գնում է Կոստանդնուպոլիս և այնտեղ բանտարկվում, որտեղ մնում է մինչև 705 թ.: Նույն թվականին Հուստի-

³⁸ Հմմտ. Կադանկատվացի, էջ 94 և 172:

³⁹ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 45:

⁴⁰ Սվազյան Հ. Ս., Աղվանից իշխաններ Ջուանշիրի և Վարազ-Տրդատի իշխանության տարեթվերի հարցի շուրջ (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1973, N 3, էջ 112):

⁴¹ Լրիվ վերնագիրն է. «Ողբք ի մահն Ջուանշիրի մեծի իշխանին» (Կադանկատվացի, էջ 225):

⁴² Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 71:

⁴³ Նույն տեղում, էջ 69:

⁴⁴ Նույն տեղում, էջ 77:

նիանոս Բ-ն կրկին գրավում է գահը և նրան թույլ տալիս վերադառնալ հայրենիք ու վերահաստատվել գահին⁴⁵:

Ն. Ադոնցը անդրադառնում է նաև հոների հետ Վարագ-Տրդատի բարեկամություն հաստատելու փորձերին, մանրամասն խոսում Բարայել եպիսկոպոսի զլխավորած առաքելության թվականի, նպատակի, անցած ուղու, Հոնաց երկրում վարած քառոց-չական գործունեության մասին, կատարում առաքելության ճանապարհին ընկած աշխարհագրական վայրերի, Հոնաց երկրի մայրաքաղաք Վարաչանի և մյուս քաղաքների տեղորոշում⁴⁶:

Քննությամբ հաստատելով, որ Բ գրքի մինչև վերջին գլուխը գրել է Մ. Կաղանկատվացին, Ն. Ադոնցը շոշափում է նաև Աղվանից եկեղեցու, նրա վարչական կառուցվածքի, հայոց եկեղեցու հետ ունեցած հարաբերությունների, դավանաբանական վեճերի ու աղանդավորական շարժումների հետ կապված հարցերը՝ այս ասպարեզում ևս դրսևորելով խոր իմացություն և հարկավոր ուղղումներ մտցնելով:

VII դ. աղանդավորական շարժումը թափանցել էր նաև Աղվանք՝ Հայոց Արևելից կողմանք: Դրանից անհանգստացած՝ Արցախի Մեծ Կողմանց գավառի եպիսկոպոս Դավիթը, Հայոց մեջ իր գիտությամբ մեծ հռչակ վայելող վարդապետ Հովհան Մայրազոմեցին (Մայրավանեցին) և Գարդմանի իշխանը գործադրում են ամեն միջոց՝ շարժումը արմատախիլ անելու համար, բայց ապարդյուն:

Գործին ստիպված միջամտում է Հայոց Աբրահամ Ա Աղբաթանեցի կաթողիկոսը (607-615): Նա շրջագայական թղթով դիմում է Վրաց և Աղվանից կաթողիկոսներին՝ նախագգուշացնելով վերահաս վտանգի մասին. թղթից օգտվել և այն իր գրքում զետեղել է Մ. Կաղանկատվացին, բայց ինչպես պարզում է Ն. Ադոնցը, ակնհայտ աղավաղումներով, որից խիստ աղճատվել է կաթողիկոսի միտքը: Դա ցույց տալու համար նա բերում է շրջագայականի համապատասխան տողերը. «Յառաջագոյն քան զմեզ կացեալքն յաստիճանի կաթողիկոսութեան յԱղուանս, իսկ մեք ի Վիրս առ Կիրովն»⁴⁷, որի իրական իմաստն այն է, որ Աբրահամից առաջ գահակալած հովվապետերը այդ մասին վաղօրոք գրել են աղվանացիներին, իսկ ինքը գրում է վրացիներին: Մ. Կաղանկատվացու մատուցմամբ, հայոց կաթողիկոսի թղթում իբր, գրված է. «յառաջագոյն քան զՀայոց աթոռակալութիւնն կացեալ աթոռակալութեան Աղուանից»⁴⁸, որը կարծել է տալիս, թե աղվանացիները քրիստոնեությունն ընդունել են հայերից շուտ՝ Մ. Կաղան-

⁴⁵ **Սվազյան Հ. Ս.**, Աղվանից իշխաններ Ջուանշիրի և Վարագ-Տրդատի իշխանության տալիսների հարցի շուրջ, էջ 192-193:

⁴⁶ **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 87-95: Ն. Ադոնցից անկախ՝ Բարայելի առաքելությանն ու նրա հետ կապված նույն հարցերի քննությամբ զբաղվել է Ս. Տրեմյանը: Տե՛ս *Монсей Каланкатуийский о посольстве албанского князя Вараз-Трдата к Хазарскому Хакану Алп-Илитверу (Записки Института востоковедения АН СССР, т. VII, Тбилиси, 1939, էջ 129-155)*: Խազարական քաղաքներ Վարաչանի, Բելենջերի ու Թարգուի տեղորոշման ու Բարայելի անցած ուղու շուրջ տե՛ս նաև **Котович В. В.**, *О местонахождении раннесредневековых городов Варагана, Беленджера и Таргу (Древности Дагестана (материалы по археологии Дагестана, т. 5, Махачкала, 1974)*.

⁴⁷ **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., 101 (ընդգծ. Ն. Ա.): Հմմտ, Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 193-194:

⁴⁸ Նույն տեղում (ընդգծ. Ն. Ա.): Մեջբերումը վերցված է «Պատմության» Մ. Էմինի իրականացրած մոսկովյան (1860, Բ, գ. ԽԷ) և թիֆլիսյան (1912, Բ, գ. ԽԷ) հրատարակություններից: Իզուր է այն փնտրել գրքի քննական բնագրում: Սրանում այն արդեն ներկայացված է ըստ շրջագայականի ուղղված տեքստով (**Կաղանկատվացի**, էջ 270 և 15-րդ կետը նույն էջում): Միայն շտկված է նաև աշխատության ռուսերեն թարգմանության մեջ, տե՛ս **Мовсэс Каланкатуаци**, նշվ. աշխ., էջ 136: Իսկ մանրամասները նույն տեղում, էջ 216-220, ծանոթ. 179:

կատվացու նախանշած թվերով՝ 270 տարի առաջ⁴⁹։ Ն. Ադոնցը պատմիչի սխալը ուղղում է ըստ շրջագայական թղթի բնագրի և դրանով հարթում այդ աղաղակող անճշտությունը։ Բայց որովհետև նրա հայտնագործությունը գիտական հասարակայնությանն անմատչելի էր մնացել, ուստի հայոց և աղվանից եկեղեցիների փոխհարաբերություններով զբաղվող ուսումնասիրողների, մանավանդ կանխակալ տրամադրվածների (Զ. Բունիյաթով, Ֆ. Մամեդովա և այլք) համար որպես փաստարկ մնում էր Մ. Կադանկատվացու թյուրըմբռնման արդյունք հանդիսացող հիշյալ տեղեկությունը։

Աններելի համարելով Մ. Կադանկատվացու սխալը⁵⁰՝ Ն. Ադոնցն անցնում է Հայոց եկեղեցուց Աղվանից ու Վրաց եկեղեցիների անջատման դրդապատճառների պարզաբանմանը։ Հայոց եկեղեցու թերի կառուցվածքի շուրջ ծավալված հայ-բյուզանդական կրոնական վեճերը ստիպում են հայերին Թադեոս առաքյալի հիմնած, ուստի առաքելադիր եկեղեցու կառուցվածքը ամբողջացնելու համար նրա արքեպիսկոպոս ճանաչել աղվանից, իսկ մետրոպոլիտ՝ վրաց կաթողիկոսներին։ Սրան ընդդիմանում են թե՛ վրացիները և թե՛ աղվանացիները։ Վերջիններս հակադրվելով հայերին՝ առաջ են քաշում Սբ. Եղիշայի՝ առաքյալ, իսկ նրա հիմնադրած եկեղեցին առաքելադիր լինելու հանգամանքը և հրաժարվում են հնագանդվել Հայոց եկեղեցուն։ Եվ այս ամենը, ինչպես նկատել է «Քննության» հեղինակը, «ներշնչված էր ամենեն առաջ ազգային ուրույն եկեղեցի ունենալու ձգտումից»⁵¹։ Նրա ճիշտ դիտողությամբ վերջին երկու եկեղեցիների «դավանաբանական խզումը լոկ քաղաքական շղարշ էր արդարացնելու համար վարչական անկախությունը»⁵²։

Ն. Ադոնցի խորաթափանց հայացքը Մ. Կադանկատվացու Գ գրքի ԻԱ (21) գլխում նկատել է մի քանի էջի պակասություն, դրանք գտել «Արարատ» հանդեսի համարներից մեկում, ընդօրինակել և ներմուծել իր աշխատության մեջ⁵³՝ ապագա ուսումնասիրողներին պատգամելով «Պատմության» բնագրի՝ հետագա հրատարակությունների ժամանակ հաշվի առնել այդ պարագան և լրացնել պակասող էջերը⁵⁴։

⁴⁹ **Կադանկատվացի**, էջ 270: Բուն Աղվանքում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակվել է միայն IV դ. 70-ական թթ. թագավոր Ուոնայրի կողմից: Տե՛ս Սվազյան Հ. Ս., Ավատատիրական հարաբերություններն Աղվանքում և քրիստոնեության հռչակումը որպես պետական պաշտոնական կրոն (ՊԲՀ, 2003, N 3, էջ 162-180):

⁵⁰ **Ադոնց Ն.**, էջ 101: Փաստագրելով երևույթը, սակայն, Մ. Կադանկատվացուն մեղադրանք հարուցելիս պետք է անել որոշակի վերապահում: Անցյալ դարի 60-ական թթ. «Պատմության» ձեռագրերի ուսումնասիրությունները դրանցում բացահայտել են ընդմիջարկություններ, որոնք կատարվել են՝ նախապես գրվածը ուղղակի քերելով ու նրանց վրա նորը դրոշմելով: (Տե՛ս Կադանկատվացի (աշխարհաբար թարգմ.), էջ 287, ծանոթ. 222): Ուստի Մ. Կադանկատվացուն վերագրվող որոշ սխալներ այնքան իրենը չեն, որքան հետագա գրիչներինը:

⁵¹ **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 109:

⁵² Նույն տեղում:

⁵³ Նույն տեղում, էջ 142-143: Էջմիածնի մատենադարանում պահված երկու ձեռագրերի հիման վրա դրանք առաջինը հրատարակել է Խ. Դադյանը: Տե՛ս Արարատ, 1897, ապրիլ, էջ 161-163:

⁵⁴ **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 141: Պակասող էջերը անգլերեն թարգմանությամբ և ծանոթագրություններով 1957 թ. հրատարակել է անգլիացի հայագետ Չ. Դոուսեթը (Տե՛ս *A. Neglected Passage in the History of the Caucasian Albanians, BSOAS, 1957, XIX, էջ 456-468*)՝ ավելի ուշ դրանք զետեղելով «Պատմության» իր իսկ կատարած թարգմանության մեջ (Տե՛ս *The History of the Caucasian Albanians by Movses Dasxuranci, translated by C. J. F. Dowsett, London, 1961, p. 216-218*): Դրանք տեղ են գտել նաև Մ. Կադանկատվացու աշխատության քննական բնագրում (Տե՛ս **Կադանկատվացի**, էջ 329-331):

Ականավոր պատմաբանի հիմնարար այս աշխատությունը, սակայն, գերծ չէ նաև թերություններից, որոնք ոչ այնքան հեղինակի բացթողումների, որքան հեռավոր այն ժամանակներին համապատասխանող գիտական մտքի հետևանք են: Դրանցից է, մասնավորապես, այն սխալ պատկերացումը, թե Մ. Կադանկատվացու թվարկած տասը թագավորները՝ Վաչագան Քաջ (Ա), Վաչե (Ա), Ուռնայր, Յոչագան (Վաչագան Բ), Մերիավան, Մատոյ, Ասայ, Եսվադեն, Վաչե (Բ) և Վաչագան (Գ) Բարեպաշտ, «նախնի Հայկազյանց տան» ներկայացուցիչներ են և նախորդել են Միհրանյաններին⁵⁵: Մինչդեռ ժամանակակից հայ աղվանագիտության համար աներկբայելի է, որ նրանք բուն Աղվանքի թագավորներ են, ծագումով Արշակունի⁵⁶ և ոչ մի առնչություն չունենին իրենցից միանգամայն տարբեր էթնիկական ծագմամբ ու ընդամենը 590 թ. Հայոց Արևելից կողմերում ասպարեզ իջած Միհրանյանների հետ⁵⁷: Սխալի հիմքը բուն Աղվանքի և դրանից աշխարհագրորեն բոլորովին այլ երկրամասում Միհրանյանների հաստատած իշխանության սահմանների միջև տարբերակում չդնելն է:

Ճիշտ չէ նաև Միհրանյանների տոհմացանկում հիշատակվող Քաջ Վարդանի նույնացումը շուրջ հարյուր տարի առաջ տեղի ունեցած պատմական իրադարձությունների մասնակից Քաջ Վարդանի հետ: Պատմագրության մեջ վաղուց է ցույց տրվել, որ եղածը շփոթություն է և առաջացել է տարբեր ժամանակներում ապրող և միևնույն անունը կրող անձանց թյուրիմացաբար նույնացնելուց⁵⁸:

Ոչ ժամանակակից պատմիչ լինելու⁵⁹ հարցի շուրջ ժամանակին կատարած մեր ուսումնասիրությունը հանգեցրել է տրամագծորեն ճիշտ հակառակ կարծիքի⁶⁰:

Անշուշտ, իրավացի կլիներ վաստակաշատ գիտնականը (և նրա նման մտածող ուսումնասիրողները), եթե Մ. Կադանկատվացու հաղորդմանը մոտենանք բառացիորեն և փորձենք 25 տարվա միջոցի մեջ տեղավորել յոթ սերունդ: Բայց թիվը, որ ստացել է Ն. Ադոնցը՝ Միհրանից հաշվելով մինչև Ջուանշիրի ծննդյան տարեթիվը՝ իր որոշմամբ՝ 615 թվականը⁶¹, ենթադրական է և կովան չի կարող լինել նման խնդրի լուծման համար: Կարծում ենք, նկատված անհամապատասխանությունը վերացնելու նպատակով ելակետ պետք է ընդունել ոչ թե Ջուանշիրի ծննդյան անվավեր թվականը, այլ նրա իշխանության գալու ստույգ ժամանակաշրջանը՝ 642 թ.⁶², ըստ այդմ՝ նրա նախնիների տիրապետության տարիները կկազմեն շուրջ 52 տարի (642-590=52), և, լրացուցիչ պարզաբանումներով, կհամապատասխանեն Մ. Կադանկատվացու հաղորդման ոգուն:

Ինչպես ասվել է, նշված 52 տարիներն էլ կարող են քիչ լինել, եթե Միհրանյանները պահպանած լինեին ժառանգական հաջորդականության կարգը՝ որդին հաջորդեր հորը: Չնայած Գ գրքի Ի և ԻԳ գլուխներում արված հավաստիացումներին, թե նրանք

⁵⁵ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 45, 73:

⁵⁶ Բացառություն է կազմում Բ. Ուլուբաբյանը, որն այս ընդհանուր ցուցակից կտրում է Վաչագան Գ Բարեպաշտին, նրան հայտարարում է Առանշահիկ և նույնիսկ Առանշահիկ ենթադրյալ թագավորական տան հիմնադիր: Տե՛ս Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 129-197: Նրա այս միտքը հերթով անցնում է մի աշխատությունից մյուսը:

⁵⁷ Միհրանյանների իշխանության գալու մանրամասն պատմությունը տե՛ս Սվազյան Հ. Ս., Աղվանքը և Միհրանյան տոհմը (Լրաբեր հասարակական գիտությունների, 1980, N 9, էջ 91-101):

⁵⁸ Հովհաննիսյան Ս., Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները և նրանց աղերսը Աշտի-շատի կանոնների հետ (ՊԲՀ, 1967, N 4, էջ 269):

⁵⁹ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 44-45:

⁶⁰ Սվազյան Հ. Ս., Աղվանքը և Միհրանյան տոհմը, էջ 91-101:

⁶¹ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 44:

⁶² Սվազյան Հ. Ս., Աղվանից իշխաններ Ջուանշիրի և Վարազ-Տրդատի իշխանության տարեթվերի հարցի շուրջը, էջ 110:

իշխել են «որդի ի հօրէ առնլով»⁶³, այնուամենայնիվ, միշտ չէ, որ հետևել են ընդունված կարգին: Օրինակ, Վարազ-Տրդատ Ա-ն, որ իշխանական արժույթին փոխարինեց Ջուանշիրին, վերջինիս եղբոր՝ Վարազ-Պերոժի որդին էր⁶⁴ (և դա այն դեպքում, երբ Ջուանշիրը Կոստանդ կայսեր կողմից պատրիկության տիտղոս ստացած որդիներ ուներ)⁶⁵: Անմիջական ժառանգներ չէին նաև կրկին Ջուանշիր անունով մի ուրիշ «մեծ իշխան», ավելի ուշ շրջանի իշխաններից՝ Վարազ-Տրդատ Գ-ն և այլն: Նշենք նաև, որ Միհրանյան տոհմում հաճախ իշխանությունն անցնում էր ոչ թե իշխողի ավագ որդուն, այլ կրտսերին: Իրենց հայրերի կրտսեր որդիներն էին Վարազ-Գրիգորը, նրա որդին՝ Ջուանշիրը և, հնարավոր է, նաև այլք: Ուրեմն բոլոր դեպքերում չէ, որ Միհրանյան տոհմում որդին հաջորդում էր հորը, և դա իշխանական գահի վրա նրանց արագորեն հաջորդելու պատճառ կարող էր դառնալ: Այս հարցում չպետք է անտեսել նաև քաղաքական գործոնը: Միհրանյաններն Աղվանք էին եկել այն նվաճելու նպատակով և տեղական Առանշահիկ իշխանների իրավունքի հաշվին էին ուզում տիրանալ երկրամասին և, բնականաբար, հանդիպելու էին տեղի հայ իշխանների դիմադրությանը: Նրանց միջև կենաց և մահու պայքար է ծավալվում, որի ժամանակ հավակնորդները հնարավոր է կորցնեին իրենց գահակալներին՝ հարկադրված լինելով վերջիններիս անընդհատ փոխարինել նորերով:

Մի հանգամանք է: Ջուանշիրի վեց նախնիներից Մ. Կաղանկատվացին խոսում է միայն երկուսի՝ Միհրանի՝ որպես տոհմի հիմնադրի ու առաջին կոտորածը սարքողի, և Քաջ Վարդանի մասին, որ երեք տարում բերդ կառուցեց և երկրի լիակատար տերը դառնալու համար նոր սրածույան ենթարկեց Առանշահիկներին: Մնացածներին պատմիչը սոսկ թվարկում է, ինչը նշանակում է, որ նրանք ոչնչով աչքի չեն ընկել, իշխել են չափազանց կարճ կամ միայն անուններ են՝ առանց որևէ գործունեության:

Հարցին մոտենալով այս տեսանկյուններից՝ Միհրանյան՝ մինչյուանշիրյան գահակալների տիրապետության կարճատև շրջանը դառնում է տրամաբանական և քաղաքական հանգամանքներով պայմանավորված⁶⁶:

Ն. Ադոնցը Գ գրքից ևս բերում է օրինակներ, որոնք, ըստ նրա, վկայում են, որ վերջինս նույնպես միևնույն հեղինակի գործն է, և դրանով տրամաբանորեն հանգեցնում այն մտքին, թե «Աղվանից աշխարհի պատմությունը» իր բոլոր՝ երեք գրքերով գրված է մի հեղինակի՝ X դարում ապրած Մ. Կաղանկատվացու

⁶³ Կաղանկատվացի, էջ 326, 339:

⁶⁴ Նույն տեղում, էջ 231:

⁶⁵ Նույն տեղում, էջ 185:

⁶⁶ Ավելի ընդարձակ՝ տե՛ս Սվազյան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 91-101: Խնդրո առարկա հարցին անդրադառնալիս Ա. Հակոբյանը մեր կարծիքը ներկայացնում է աղճատված ձևով: Ըստ նրա, իբր, մենք գտնում ենք, որ Մ. Կաղանկատվացին «թվարկում է ոչ թե Միհրանյանների յուրաքանչյուր սերնդի առաջին ներկայացուցիչներին, այլ մի քանիսին, հետևաբար Միհրանի և Ջուանշիրի միջև եղել է ավելի պակաս սերունդ, քան վեցը» (տե՛ս **Акопян А. А.**, նշվ. աշխ., էջ 196, ծանոթ. 56): Սակայն ո՛չ մեր հոդվածից և ո՛չ էլ վերոշարադրյալից բնավ էլ չի բխում այն, ինչ վերագրվում է մեզ: Հոդվածում (և այստեղ) բերել ենք փաստեր, որոնք ցույց են տալիս, որ Միհրանյանների գահը հաճախ անցել է իշխողի ոչ անմիջական ժառանգին, որն էլ կարող էր նրանց՝ արագորեն միմյանց փոխարինելու պատճառներից մեկը լինել, և նշված ժամանակաշրջանում վեց սերունդ (իսկ պակասի մասին խոսք անգամ չկա, չէր էլ կարող լինել, ոչ էլ ենթադրելի է մեր ասածներից) տեղավորելու հնարավորություն ընձեռել: Թե սրանից ինչպես է Ա. Հակոբյանը եզրակացրել, որ մենք իբր Մ. Կաղանկատվացու հաղորդումից բխեցրել ենք նման անիրական միտք՝ նույնչափ անիրական հետևություն, մնում է անհայտ:

կողմից: Բայց նրա վերջին ներկայացրածները, գլխավորապես վերաբերելով Աղվանից եկեղեցուն ու նրա ներքին կյանքի զանազան խնդիրներին ու հետազոտության անսպառ նյութ հանդիսանալով, հիմնական խնդրի հանգուցալուծմանը չեն նպաստում: Դրանք պատմական հանգամանքների բերումով կարող էին ստեղծված լինել ավելի վաղ ժամանակներում և միայն հետո, հավաքվելով ու խմբագրվելով ուշ շրջանի հեղինակի կողմից, զետեղվել «Աղվանից աշխարհի պատմության» մեջ⁶⁷:

Չնայած նշված թերություններին՝ Ն. Ադոնցի խնդրո առարկա աշխատությունը մի մեծարժեք գործ է՝ անգամ պատմագիտության նվաճումների այսօրվա բարձունքից: Այն գալիս է լրացնելու Մ. Կաղանկատվացուն նվիրված լավագույն աշխատությունների ցանկը և խթան ու հիմք է նոր ուսումնասիրությունների համար:

Աշխատության բուն նյութին կցված են հավելվածներ ու ծանոթագրություններ:

Հավելվածներից առաջինը նույնպես պատկանում է Ն. Ադոնցի գրչին և Մ. Կաղանկատվացու աշխատության առաջին գրքի քննության փորձ է, որ, սակայն, մնացել է անավարտ⁶⁸, իսկ երկրորդը «Խորենացիական հարցն ու հայր Կարդան Հացունին» հայտնի աշխատությունն է⁶⁹, որն էլ ներկա ուսումնասիրության ի հայտ գալու փաստական շարժառիթն էր:

Ծանոթագրությունները, որոնք լրացնում են նյութը և պարզաբանումներ մտցնում դրանցում, կազմել է Ն. Ադոնցի գրական ու գիտական ժառանգությանը լավատեղյակ դոցենտ Պ. Հովհաննիսյանը՝ ցուցաբերելով արժարժվող հարցերին ու վերջիններիս առնչվող գրականության քաջ իմացություն և պատմաբանի հմտություն:

Գրքի տպագրությունը հրատարակչական բարձր մակարդակով իրականացրել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանը:

«Քննություն Մովսես Կաղանկատվացու» աշխատության լույսընծայումը ներկա տեսքով խոնարհումի տուրք է ականավոր հայագետի հիշատակին, նրա պատվին կանգնեցված հավերժի մի հուշասյուն:

ՍՎԱԶՅԱՆ Հ. Ս.

Պատմական գիտությունների դոկտոր

⁶⁷ Վերջինը հայագետներից սույն հարցով զբաղվել է Վ. Առաքելյանը: Մ. Կաղանկատվացու աշխատության քննական բնագիրը պատրաստելիս նա, նոր քննություն կատարելով աշխատության հեղինակի (հեղինակների) հարցի շուրջ, ի հակադրություն Ն. Ադոնցի, գտնում է, որ «Աղվանից աշխարհի պատմությունը» երկու հեղինակի գործ է: Առաջին երկու գրքերը գրել է VII դ. ապրած, ժամանակակից ու ականատես պատմիչ Մ. Կաղանկատվացին, իսկ երրորդը՝ X դ. Մ. Դասխուրանցին: Ըստ նրա՝ վերջինս էլ հենց խմբագրել է իր նախորդի գիրքը, լրացրել և նրան տվել այսօրվա տեսքն ու ծավալը (տե՛ս Կաղանկատվացի, էջ Ե-ԺԸ):

⁶⁸ Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 149-158:

⁶⁹ Նույն տեղում, էջ 159-163: